ները, և իւրաքանչիւր անգամին պատահած կարևոր ծախքերը, առանց որոց անկարելի էր ի հարկէ գործ տեսնել, և որպիսի պարագայքը այժմ մեզ սեպհականութիւն Դպրոցաց, բաց ի զգեստների մի մասից, որ կ'պատկանին Պ. Ս. Ա. Արամելիքեանցին՝ ներկայ կառավարչին Թատրոնի։

Այժմ ընկերութիւնս սորա հետ միասին ներկայացնելով Ձեր գերապատութեանը յիշեալ Հոգաբարձութիւնից ստացած բոլոր մոնից և ծախուց ցուցակը, այսուհետև ոմանց անուղղակի յարձակմունքներին տեղիք չտալու և նոցա անվերահաս և անխոհեմ կերպով լոկ կարծիքական դատմունքները իսպառ կարճացնելու համար, ներկայ 1870 թուականից սկսած կ'պարտաւորի իւր Թատրոնական խաղարկութիւնքը շարունակել հետևեալ պայմաններով։

Նախ՝) Ամէն մէկ խաղին՝ ընդ ձեռն Գերապատութեանդ յօգուտ երկսեռ Դպրոցաց՝ հասուցանել 30 բուբ. դրամ։

Երկրորդ՝) Թատրոնի բեմը ամրողջ իւր պարագաներով որ գտնուում է Թեմական Դպրոցի դահլիճում, կմնայ Ձեր Գերապատութեան իրաւանց ներքոյ։

Երրորդ՝) Ընկերութիւնը պիտի ունենայ իւր կողմից ընտրած միշտ մի գլխաւոր կառավարիչ, որոյ պահպանութեան և գործադրութեան տակ կլինին բոլոր Թատրոնական պարագայքը, օրինաւոր ցուցակաւ. և որից միանգամայն կախումն կ'ունենայ ընկերութիւնը ամենայն հաւատարմութեամբ և հնազանդութեամբ Թատրոնական յարաբերութեանց մէջ համաձայն ընկերութեանս մէջ ունեցած առանձին կանոնաց։

Չորրորդ՝) Եթէ կլինին ուրիշ ցանկացողներ ներկայացնելու նոյն բեմի վերայ որ և իցէ դեր, պիտի կանխիկ վճարեն յօգուտ երկսեռ դպրոցաց 30 բուբլին, բաց ի ամրողջապէս իրենց յանձնուած պարագայից հասուցած վնասուց գինն։

Հինգերորդ՝) Ո՛չ ոք իրաւունք չ'պիտի ունենայ Թատրոնական պարագայքը վաճառելու, որոնք այժմ են պտուղք քրտանց ընկերութեանս և պիտի մնան իբրև հաստատուն աղբիւր վերոյիշեալ երկսեռ Դպրոցներին. իսկ եթէ՝ յընթացս մի տարուայ այն պարագայքը մնան անգործադրելի և ոչնչանալու լինին, այն ժամանակն յիշեալ Դպրոցաց գլխաւոր Կառավարիչքն խորհրդով և տնօրէնութեամբ՝ ինչպէս որ արժան կ'տեսնեն և օգտաւէտ, այնպէս կարգադրեն։

Վեցերորդ՝) Ցատուկ ընկերութիւնը կ'բաղկանայ ընդ ամենն վեց անձինքներէ, այն է՝ հինգ դերասաններէ և մի կառավարչէ, որոնք ազատ են իւրեանց պաշտօնին մէջ, ոմի՞ երբ կամենայ կարող է որոշուիլ. բայց յետոյ ո՛չ ձայն ունենալ և ոչ մասնակից օգտին կամ պատասխանատու վնասուն լինիլ։ Մասնաւոր դերեր կ'տուին ուրիշներին, նայելով նոցա յարմարութեանը։

Եւ եօթներորդ՝) Ընկերութիւնս իւր այս առաջարկած յօդուածները վաւերական առնելու համար, կ'խնդրէ Ձեր Գերապատութենէն բարեհաճել Աստուած ամենազորի թերթերի մէջ տպել տալու ի գիտութիւն ընթերցողաց։

Սողոմոն Աբրամելիքեանց
Սիմէոն Փիլիպպոսեանց
Նէրսէս Սիմէոնեանց
Նահապետ Աշնանասեանց
Վասիլ Աղիսաղաբեանց
Աղէքսանդր Աղամանեանց

ի 20 Յունվարի 1870 ամի
Յերևան

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՑՍ։

(Շ-բ-ն-ի-ն-ի*)

ԻՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍ

	ռ-բ.	կ-պ.
Մկրտիչ Գրիգորեան Տէր Մկրտչեանց	100	—
Սարրայ և որդի նորա Աղէքսանդր Տէր Մկրտչեանց	50	—
Սարգիս Բէկարեանց	50	—
Մահտեսի Յովհաննէս Տէրջանեանց . .	50	—
Զաքարիա Ներսիսեանց	10	—
Խաչատուր Մարգարեան Փանեանց . .	10	—
Աղէքսանդր Դուրգարեանց	10	—
Մահտեսի Թեղան Հախնազարեանց .	15	—
Գէորգ Աղանեանց	10	—
Կարապետ Աղամիրզեանց	20	—

*) Տես Թիւ Ը. 1869 ամի.

	ՐՈՒԲԼԻ	ԿՈՊ
Մինաս Շահնազարեանց	10	—
Սարգիս Ղարիբեանց	5	—
Յարութիւն Խանդուլեանց	5	—
Գեորգ Դաւթեանց	4	—
Հայրապետ Համբարձումեանց	2	—
Աւետիս Փանոսեան Խանդուլեանց	4	—
Գասպար Բալիեանց	2	—
Ստեփան Դողարեանց	5	—
Բաղդասար Ասլանեանց	5	—
Առաքել Քալանթարեանց	3	—
Մարքար Մարքարեանց	2	—
Մկրտիչ Գասպարեանց	2	—
Մարգարէ Խօջամիրզեանց	7	—
Մելքոն Ամթարեկեանց	10	—
Եղբարք Արասխանեանք	50	—
Բաղդասար Քահանայ	10	—
Կարապետ Կոստանդեաց	3	—
Փանի Փանիեանց	5	—
Ստեփան Զոհրաբեանց	3	—
Սարգիս Փանեանց	10	—
Եղբարք Խ. Խալաթեանք	10	—
Մկրտիչ Յովհաննիսեանց	3	—
Մկրտիչ Բաղդասարեանց	1	—
Յովհաննէս Կոստանդինեանց	3	—
Կարապետ Բարխուդարեանց	3	—
Գասպար Մնացականեանց	2	—
Առաքել Խոջամիրեանց	2	—
Մինաս Փանեանց	2	—
Գրիգոր Աբրեանց	2	—
Յովհաննէս Թաղոսեանց	1	—
Բաղդասար Մնացականեանց	4	—
Մահտեսի Աւետիս Համբարձումեանց	2	—
Կարապետ Աղայեանց	1	—
Յակոբ Փանեանց	2	—
Մկրտիչ Մահտեսի Ստեփանեանց	1	—
Յովհաննէս Յակոբեանց	1	—
Սարգիս Թուիչեանց	1	—
Բաղդասար Տէր Մի.քայէլեանց	5	—
Թոմաս Գաբրիէլեան Ասլանեանց	75	—
Գաբրիել Քահանայ Մինասեանց	3	—
Սիմէոն Քահանայ Արզարեանց	3	—
Տէր Զաքարիա Կարապետեան	1	—
Մինաս Բարխուդարեանց	2	—
Նիազ և Յոմսեփ Մարգարեան	2	—
Էմրվազ Բարսեղեանց	1	—
Մինաս Մուրատեանց	1	—

	ՐՈՒԲԼԻ	ԿՈՊ
Բաղդասար Սափրազեանց	2	—
Գասպար Էլշիրեկեանց	1	—
Մկրտիչ Թաղոսեանց	1	—
Աւետիս Մնացականեանց	2	—
Սարգիս Խոջամիրեանց	5	—
Մամբրէ Սիմոնեանց	3	—
Մկրտիչ Մելիք Յովհաննեսեանց	1	—
Կարապետ Եարմիլեանց	1	—
Առաքել Բեկլարեանց	1	—
Զաքարիա Հախնազարեանց	1	—
Մկրտիչ Յովնաթանեանց	1	—

(Շարունակելի)

Գահիրէէն առ մեզ հասած ազգային լուրերը ուրախալի են յոյժ. Գերապատիւ տէր Մեսրոպ արքեպիսկոպոսը Բարձր. Խտիվին ներկայանալու պատիւը ունենալով՝ բաղում յարգանօք և համակրական սիրով ընդունուեր է. Բարձր. Փոխարքային, որուն առջեւ Նորին Սրբազնութիւնը շնորհ գտած է՝ի վաղուց անտի, մարդասիրական յորդորներ և հայրական խրատներ տուեր է անոր, որոց իմաստը այս է. Ամեն մարդ գիտէ որ Հայոց գործունեայ և հաւատարիմ ազգին վերայ մանաւոր սէր եւ համակրութիւն ունիմ. ուստի կը փափաքիմ որ ձեր հոգեւոր առաջնորդութեան օրովը Եգիպտոսի Հայ ժողովուրդը իւր ազգային անդորրութիւնը եւ խաղաղութիւնը կատարելապէս վայելէ. և այս օգտակար արդիւնքն ալ ուրիշ կեպիւ չէք կրնար ձեռք բերել, բայց միայն աշխատելով արդարութեամբ և խաղաղասիրութեամբ ըմբնցնելու անոնց ազգային գործքերը. Ամենէն յառաջ ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ Եգիպտոսի մէջ գտնուած Հայոց ազգային վարժարանաց բարեկարգութեանը և յառաջադիմութեանը վրայ. պէտք է որ զանոնք օրըստօրէ եւս առաւել զարգացնելու մեծ հոգ տանիք. քանզի այս է իմ գլխաւոր փափագս. Եւ երբոր իմ փափաքիս կատարելապէս՝ի գործ գրուիլը տեսնեմ, յայնժամ ես եւս հարկ եղած օգնութիւնը և շնորհը պիտի չխնայեմ ձեր ազգային վարժարանաց.

Փոխարքայական այս պատուաւոր ընդունելութենէն ետեւ, Եգիպտոսի իշխանութեան քանի մը գլխաւոր պաշտօնատարք շնորհաւորութեան դա-

ցեր են Գեր. Մեսրոպ պրպաղանին, որուն առաջնորդական բարձր պաշտօնը հաստատուած ըլլալու մասին՝ Գահիրէի աղդային վարչութեան կողմանէ աղդարարական նամակներ յուղարկուեր են տեղական ամեն ատեաններուն, որոնք անմիջապէս ընդուներ և արձանագրեր են Եդիպտոսի նոր առաջնորդին անունը։ Կըսուի թէ Գահիրէի մէջ աղդային ընդ հանուր ժողով մը պիտի գումարուի այս օրերը, որուն նպատակը՝ պիտի ըլլայ նոյն մայրաքաղաքին Հայոց վարժարանը բարեկարգել և զայն աւելի բարդաւաճ վիճակի մը մէջ դնելու միջոցներու վրայոք խորհիլ։

Արշալոյս դեկտ. 20

Կը լսենք թէ Հապէշիստանու պատերազմի առթիւ Հայոց աղգին առ Անգղիական մեծ աղգն մատուցած ծառայութիւնը փոխարինելու համար՝ Անգղիոյ դեսպանատունը մեր պատրիարքարանին հետ անուղղակի բանակցութեան մտած է։

Օրագիր Թիւ 99

Մանղումէի մէջ գոհութեամբ կը՞ կարդանք, թէ Եդիպտոսէն Վ. սեմ. Գէորգ պէյ Ռափայէլեան նամակաւ՝ մը Փանոսեան էֆէնտիի իմացուցեր է թէ՝ Ազգապետ վարժարանի մը կառուցմանը համար եթէ յարմար տեղ մը գտնելու ըլլայ, ինքն յօժարամիտ է փոխարէնը հատուցանելու։

Այս դարուս անմահութիւնը աղքատին ողորմած ըլլալու համար աղքատութեան բարձմանը նպաստելուն մէջ է։

Գէորգ պէյ Ռափայէլեան կրնայ ներկայ դարուս անմահ անձանց կարգն անցնիլ իր գործովը, և օրինակ ըլլալ այն կեղծ փառասիրաց ու ըսել թէ՝ փառաւորութիւնը լրագրապետներէն ածական մուրալուն մէջ չէ, այլ փառաւոր գործ ընելուն մէջ։

Նոյն։

ՆՈՅԻ ԹՈՌԱՆ ԹՈՌՆԵՐ ԶՈՒԻՑՑԵՐԻՈՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԷՋ։

Մասիսի դեկտեմբ. 27 շաբաթաթերթին մէջ Զուիցցերիոյ Ցուրիխ քաղաքէն դեկտ. 8 թուակնով գրուած նամակի մի մէջ կը կարդանք, որ բոլոր Զուիցցերիոյ ուսուցիչները տարին անգամ մը զանազան քաղաքներու մէջ ժողով ընելով իրենց ուսուցչական պաշտօնին, այն է դաստիարակութեան վրայ, կը խորհին և կը խօսին եղեր։

Նամակագիրը այս տարի տեղի ունեցած այս տեսակ ժողովներուն մէկ քանիին նկարագրութիւնը կընէ։

Դաստիարակութեան մասին յիշեալ նամակին կարեւոր կտորներուն քաղուածն և անոնց վրայ մեր խորհրդածութիւնը, ուրիշ անգամի թողլով, այս անգամ յիշեալ նամակին հետեւեալ մասը միայն կը քաղենք։

"Օգոստոսին մի այլ մանկավարժական ժողովի ներկայ էի, որ Վինտրրտուր քաղաքի մէջ տեղի ունէր։ Այս տեղ միայն Ցիւրիխ Կանտոնի դաստիարակներն և ուսուցիչներն էին ժողոված, մօտ 600 հոգի։ Այս ժողովին ներկայ էին երկու երիտասարդ Հայեր, որոնք Զուիցցերիոյ մէջ կուսանին։ Ժողովի ծանր բովանդակութիւնը մի կողմը թողնելով, միայն հասարակաց հացկերութենէ մի անց.ք կը ցանկամ յիշել 'ի հրապոյր և 'ի քաջալերութիւն հայրենակցացս։

"Հացկերութեան ժամանակ զանազան համառօտ ճառեր կը խօսային և կենացներ կը պարպէին։ Մէկը բաւական երկար սկսաւ Նոյի վրայ խօսալ զուարճալանութեամբ և քանի մի անգամ Հայաստան յիշեց, ուր Նոյ այն պատուական հիւթը (գինին) հնարել է, որ ուսուցիչների մխիթարութիւն է և ելն։ Այս զուարճալի խօսքերէն յետոյ յարմար էր որ Հայն ևս իր ձայնը բազմութեան մէջ լսելի անի։ Այսպէս ալ եղաւ։ Նախագահէն հրաման առնելով յանուն Նոյի, որի թոռան թոռները իրենց մէջ կը դաստիարակուին ու կը զարգանան, շնորհակալութիւն արաւ Զուիցցերիայի դաստիարակներէն, և մի երկու խօսքով յիշելով նոցա մարդասիրական վարմունքը օտարականների հետ՝ պարպեց իր բաժակը հանդիսականների կենացը։

"Մեծ տպաւորութիւն արաւ այս ամենի վրայ, մանաւանդ որ չը գիտէին ընդհանրապէս որ Հայեր ևս կարող էին լինել իրենց մէջ և ամենքը կը ցանկային Հայերին տեսնել և իրենց բաժակով նոցա բաժակին զարկել։—Ալտդորֆի դպրոցի դիրեկտորը այնչափ ոգևորուեցաւ, որ տեղէն բարձրանալով կ'ա-